ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ
*Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրութեան ֆակուլտետի
առկայ բակալաւրիատի 4-րդ կուրսի
ուսանող*

ՎԵՑ ՀՈԼՈՎՆԵՐԻ ԸՄՌՆՄԱՆ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր. *հոլով, քերականական կարգ, է. Աղայեան, հոլովի արտայայտութեան պլան, հոլովի բովանդակութեան պլան, շարահիւսական մակարդակ, ձեւաբանական մակարդակ, ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական։*

Key words: *case, grammatical order, E. Aghayan, plan of case expression, plan of case content, syntactic level, morphological level, nominative, genitive, dative, ablative, instrumental, prepositional.*

Հայերէնի քերականագիտութեան մէջ մեր լեզուի տարբեր փուլերում հոլովման և հոլովների հարցը քննարկման ու վէճերի առարկայ է եղել մշտապէս։ Հոլովների թուի և սահմանման բազմայատկանիշ սկզբունքների ճշգրտումը սկսուել է գրական աշխարհաբարի քերականութեան ուսումնասիրութեան հիմնադիր երկու ռահվիրաների՝ Ա. Այտընեանի և Ս. Պալասանեանի աշխատանքներից։ Հարցին տարբեր ժամանակներում հիմնաւոր, քննական անդրադարձ են կատարել այնպիսի նշանաւոր հայագէտներ ու անուանի լեզուաբաններ, ինչպիսիք են Ա. Ղարիբեանը, Գ. Սեւակը, Ա. Աբրահամեանը, Պ. Պետիրեանը, Վ. Քոսեանը, Գ. Ջահուկեանը, Մ. Ասատրեանը, Ռ. Իշխանեանը, Պ. Շարաբխանեանը, է. Պիվազեանը և այլք։ Անշուշտ, այս բոլոր տեսակէտների խառնարանում առանձնանում է նորարար գիտնական Մ. Աբեղեանի աւանդը, որն իր մեծարժէք և մեծածաւալ աշխատութիւններով, իւրաբնոյթ մօտեցումներով, քերականական բազմաթիւ հարցերի վերաբերեալ յատուկ մեկնաբանութիւններով վճռորոշ խօսք է ասել հոլովագիտութեան մէջ։ Նա մերժում է մինչ այդ արմատացած Ս. Պալասանեանի տեսակէտը։ Նշենք, որ հետեւելով գրաբարի օրինաչափութիւններին և ելակէտ ունենալով տրամաբանական դպրոցի սկզբունքները՝ աշխարհաբարի համար Ս. Պալասանեանն ընդունում է եօթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական և երեք հոլովում՝ ի, ու, ան (եան)։ Քերականագէտը հաստատում է նաեւ Ա. Այտընեանի հայեցակէտը և հոլովը դիտում իբրեւ ձեւաբանական կարգ, հոլովի հասկացութեան մէջ նկատի ունենալով և՛ իմաստը, և՛ ձեւը։ Մ. Աբեղեանը առանձնայատուկ մօտեցում դրսեւորեց քերականական բազմաթիւ հարցերի և յատկապէս հոլովների վերաբերեալ։ «Ինչ է հոլով ասածը,- գրում է պրոֆ. Աբեղեանը,- եթէ ոչ հոլովելի բառերի զանազան ձեւեր (Form), որ կազմւում են մեծ մասամբ հոլովական վերջաւորութիւններով։ Այդ ձեւերը ցոյց են տալիս զանազան կախման յարաբերութիւններ՝ տեղի, ժամանակի, պատճառի և այլն, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խօսքի մէջ կապւում

են մի ուրիշ բառի հետ։ Այդ հոլովների մասին սովորեցնել կը նշանակէ երկու բան սովորեցնել. նախ՝ թէ տրուած բառը քանի տեսակ ձեւ կամ հոլով կարող է ունենալ և որոնք են այդ ձեւերը, և երկրորդ՝ թէ ամէն ձեւ կամ հոլով ինչպիսի և քանի տեսակ կախման յարաբերութիւն կարող է ցոյց տալ խօսքի կապակցութեան մէջ. ուրիշ խօսքով՝ որոնք են այս կամ այն հոլովի գործածութիւնները. որովհետեւ ամէն հոլով միայն մի տեսակ յարաբերութիւն չի ցոյց տալիս, այլ մի քանի, երբեմն և շատ»[1]։ «Հոլովի մէջ երկու տարբեր բան եմ տեսնում,- գրում է նորարար քերականագէտը, - ձեւ և ձեւի ֆունկցիա», կամ՝ «Ամէն մի հոլովի մէջ երկու բան կայ. նախ, հնչիւնը, և ապա՝ներքինը, այդ ձեւի ցոյց տուած նշանակութիւնները, կատարած պաշտօնները»[2]։ Մ. Աբեղեանը, հմտօրէն վերլուծելով գրական արեւելահայերէնի հոլովման համակարգը, յանգեց հարցը լուծել յօգուտ հինգ հոլովի, որոնք են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական։ Ըստ նրա՝ սեռականը ձուլուել է տրականին, իսկ հայցականի գործառոյթները իրականացնում է կա՛մ ուղղականը, կա՛մ տրականը։ Այս տեսակէտը ժամանակին եռափուլ քննարկումների, տարաձայնութիւնների լայն դուռ բացեց, որը տարբեր բռնկումներով շարունակւում է նաեւ այժմ։ Այսօր էլ շատ լեզուաբաններ համակարծիք չեն քերականական բազմաթիւ հարցերի վերաբերեալ և դրսեւորում են անմիաբանութիւն յատկապէս հոլովների խնդրում։ Մի մասը պաշտպանում է աւանդական տեսութիւնը և գտնում է, որ ժամանակակից հայերէնում կայ եօթ հոլով, աւելի ստուար մաս այն կարծիքին է, թէ հոլովները հինգն են։ Կան նաեւ լեզուաբաններ, որոնք «աղայեանական» վեց հոլովի տեսութեան համախոհներն են և ժխտելով հայցականը՝ գտնում են, որ սեռականը անկախ հոլով է։ Անշուշտ, այս վերջին մօտեցման արարողը՝ մեծ լեզուաբան է. Աղայեանը, իր նիւթի բազմակողմանի դիտարկումներով, ինքնատիպ հարցադրումներով, փաստարկումներով, շարադրանքի թարմութեամբ յեղաբեկում կատարեց։

Մինչ ներկայացնելը է. Աղայեանի վեց հոլովի տեսակէտը սահմանենք արդի լեզուաբանութեան մէջ ինչպէս են ըմբռնում հոլով հասկացութիւնը։ Հայերէնագիտական բառարանում տրուած է այս լեզուական իրողութեան հետեւեալ բնորոշումը[3].

ա) քերականական կարգ է,

բ) դրսեւորւում է անուանական ու դերանուանական համակարգերում, մասամբ և այլ բառախմբերում,

գ) արտայայտում է բառի որոշակի դրուածք խօսքի (նախադասութեան, բառակապակցութեան) մէջ։

Հայոց լեզուի պատմութեան մէջ եղել են հոլովի արտայայտութեան յարաբերութեան, կազմութեան և այլ տարբեր դասակարգումներ, ինչն էլ խթան է դարձել նաեւ հոլովների քանակի տարընթացութեան։ Այսպէս.





[1] **Աբեղեան Մ.,** Աշխարհաբարի հոլովները, 1908, էջ 4։

[2] Տե՛ս **Աբեղեան Մ.,** Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, 1909, էջ 10։

[3] Տե՛ս **Պետրոսեան Հ.**, Հայերէնագիտական բառարան, Երեւան, 1987, էջ 579։

Պէտք է նշել, որ լեզուաբանութեան մէջ գործածուող հոլովների անուանումները, այն է՝ ուղղական, սեռական, տրական և այլն, մեզ են անցել յունարէնից և լատիներէնից։ Հոլովական տեսակէտից ամէնից քիչ զարգացած վիճակում գտնւում է չինարէնը, որն ունի միայն ուղղական հոլով, իսկ կան լեզուներ, որոնց հոլովների թիւը հասնում է մօտ 50-ի։ Հ. Աճառեանը փաստում է, որ հայերէնը պատկանում է այն լեզուների շարքին, որոնք խստիւ յապաւում են բառի վերջավանկը, և այս առումով վաղ թէ ուշ սպասելի է հոլովների թուի կրճատում[4]*։*

Է. Աղայեանը, հմտօրէն վերլուծելով հոլովի քերականական կարգը, նշում է, որ ամէնից առաջ հոլովը պէտք է դիտարկել որպէս հոլովուող բառի բառաձեւերից մէկը և նկատել թէ ինչ յարաբերութիւններ է ստեղծում այն հոլովուող բառի և նախադասութեան այլ անդամների միջեւ։ Նա, ըստ էութեան, իր առջեւ խնդիր դրեց նոյնացնել ուղղական, հայցական հոլովները և իրարից անջատել սեռական, տրական հոլովները, այսպիսով, հոլովների թիւը հասցնել վեցի։ Աղայեանը քննելով հայցական և ուղղական հոլովները եզրակացնում է, որ.

1. Հայցական հոլովը ուղիղ խնդրի արտայայտման միակ հոլովը չէ։

2. Պարտադիր չէ, որ ուղիղ խնդիրը տուեալ լեզուում միայն մէկ հոլովով արտայայտուի. նա կարող է արտայայտուել նաեւ տարբեր հոլովներով։

3. Պարտադիր չէ, որ ենթական և ուղիղ խնդիրը արտայայտուեն տարբեր հոլովներով. նրանք կարող են արտայայտուել նաեւ միեւնոյն հոլովով[5]*։*

Մեր համոզմամբ, պէտք է նշել, որ գրաբարում եզակի ուղղական և հայցական հոլովները ձեւակազմական տարբերութիւններ չէին դրսեւորում. ուղղականն անցնում էր նաեւ հայցականի փոխարէն։ Յետագայում արդէն նկատելի է դառնում յոգնակի ուղղականի և հայցականի նոյնացումը եւս։ Ք-ով յոգնակի ուղղականը կիրառւում է իբրեւ հայցական, ս-ով հայցականը՝ իբրեւ ուղղական։ Աշխարհաբարում այս հոլովները օբյեկտիւօրէն չեն տարբերւում, հակադրւում կապակցելիութեամբ կամ գործառութեամբ։ Ինչ վերաբերում է ենթակային և ուղիղ խնդրին, դրանք իրարից տարբերւում են ոչ թէ հոլովով, այլ բայի ենթակայ առնելով, յաճախ դիրքով (ենթական սովորաբար նախորդում է ուղիղ խնդրին), իսկ երբեմն էլ քերականութիւնը անզօր է լինում տարբերակել ենթական ուղիղ խնդրից, անգամ դիրքը կամ շարադասութիւնը չեն օգնում[6]*։ Թուում է՝ աւելի դիւրին է սեռականի հաստատման խնդիրը, որը Է. Աղայեանի վեց հոլովական տեսութեան հիմնական կռուանն էր։ Յօգուտ սեռական հոլովի ինքնուրոյն գոյութեան բերւում են հետեւեալ համոզիչ փաստարկները.*

ա. Սեռական հոլովի պատկանելութեան, ստացականութեան իմաստը չափազանց ուժեղ ու բնորոշ է և անհամատեղելի տրական հոլովի պարագայական իմաստների հետ։

բ. Սեռական և տրական (և առհասարակ բոլոր) հոլովների տարբերակման գործում կարեւոր դեր է խաղում կապակցելիութիւնը։ Սեռական հոլովը խօսքի մէջ կապւում է գոյականին, իսկ տրական հոլովը՝ բային։

գ. Սեռական-տրական հոլովների միջեւ կայ նաեւ ձեւական խիստ տարբերութիւն. տրական հոլովը կարող է որոշիչ յօդ ընդունել։

դ. Որոշիչ յօդը, որոշեալութիւն արտայայտելուց բացի, տրական հոլովի համար ձեռք է բերել նաեւ հոլովակերտ նշանակութիւն, ինչպէս զ նախդիրը գրաբարում։ Իբրեւ դրա օրինակ կարելի է յիշել յատուկ անունների, որոշեալ և անորոշ դերանունների, որոշիչ յօդի փոխյարաբերութիւնները։ Որոշեալ և անորոշ դերանուններն առանց յօդի

---

[4] Տե՛ս **Աճառեան Հ.,** Լիակատար բերականութիւն հայոց լեզուի հ. 3, Երեւան, 1957, էջ 376:

[5] Տե՛ս **Աղայեան Է.,** Ժամանակակից հայերէնի հոլովումը և խոնարհումը, Երեւան, 1967, էջ 198:

[6] **Աբաջեան Ա.,** Հայերէնի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ բերականագիտութեան մէջ, Երեւան, 2006, էջ 331:

էլ ունեն խիստ արտայայտուած որոշեալութեան կամ անորոշութեան իմաստներ, և այդ դերանունների՝ կապակցուած գոյականի յօդ ստանալը այս պարագայում նրանց համար ոչ մի նշանակութիւն չունի, քանի որ անորոշ դերանունը, յօդ ընդունելով, բնաւ որոշեալութիւն չի արտայայտում։ Ուստի տրական հոլովում աւելացող որոշիչ յօդը որոշեալ դերանունների համար գրեթէ լրիւ հոլովակազմիչ դեր է կատարում[7]*։*

Բացի վերը նշուածից՝ սեռական և տրական հոլովները ձեւաբանօրէն տարբերակւում են անձնական ***(ես, դու, նա, ինքը, մենք, դուք,)*** *և ցուցական* ***(սա, դա)*** *դերանունների մէջ։ Այսպէս՝*

ես-իմ-ինձ	*սա-սրա-սրան*
դու-քոյ-քեզ	*դա-դրա-դրան*
նա-նրա-նրան	
ինքը-իր-իրեն	
մենք-մեր-մեզ	
դուք-ձեր-ձեզ	

Տեղին է յիշատակել, որ Մ. Աբեղեանը այս ձեւերը դիտում է իբրեւ ստացական դերանուն և նշում, որ այս դերանունների բացառականը կազմւում է տրականից, ոչ սեռականից։ Ահաւասիկ, ինչպէս՝

ես-իմ-ինձ	*բցոկ. ինձ(ա)նից*	*սա-սրա-սրան*	*բցոկ. սրանից*
դու-քոյ-քեզ	*բցոկ. քեզ(ա)նից*	*դա-դրա-դրան*	*բցոկ. դրանից*
նա-նրա-նրան	*բցոկ. նրանից*		
ինքը-իր-իրեն	*բցոկ. իրենից*		
մենք-մեր-մեզ	*բցոկ. մեզ(ա)նից*		
դուք-ձեր-ձեզ	*բցոկ. ձեզ(ա)նից*		

Լեզուաբանների փոխադարձ հակադարձումները շարունակւում են մինչ օրս, և այսօր էլ նկատելի է մեծ հետաքրքրութիւն նիւթի նկատմամբ։ Մերօրեայ լեզուաբաններից տեղին է յիշատակել Ն. Դիլբարեանի և Փ. Մելթիխանեանի աշխատանքները, որոնք Աղայեանի հետնորդներն են՝ վեց հոլովականներ։

Այսպիսով, արձանագրենք, որ Մ. Աբեղեանի տեսութեան մէջ առկայ է ներքին հակասութիւն. շարահիւսական մակարդակում նա շարունակում է պահպանել սեռականի հասկացութիւնը, երբեմն որպէս տերմին, երբեմն որպէս հոլով։ Ակներեւ է, որ սեռականի՝ որպէս ինքնուրոյն հոլով, բացառումը լրացուցիչ դժուարութիւններ է ստեղծում հոլովների ճշգրտման և ուսուցման գործընթացում։ Մեր հիմնական նպատակն է, որ արդի քերականագիտութեան մէջ, յատկապէս դասագրքերի մակարդակում, անունների 6 հոլովի համակարգը առաւել գործուն շրջանառութեան մէջ դրուի։

[7] Տե՛ս **Խլղաթեան Ֆ.,** ժամանակակից հայոց լեզու մաս Բ, Երեւան, 2010, էջ 44-45։

Վ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՎԵՑ ՀՈԼՈՎՆԵՐԻ ԸՄԲՌՆՄԱՆ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Ամփոփում

Հոլովը ժամանակակից հայերէնի ձեւաբանական կառուցուածքի կարեւորագոյն իրողութիւններից մէկն է։ Ամէն հոլով ունի իր ձեւը և արտայայտում է որեւէ քերականական (վերաբերական) իմաստ։

Այս զեկուցման նպատակն է ներկայացնել հայ լեզուաբանութեան մէջ առկայ վեց հոլովի տեսութիւնը։ Նշեալ տեսակէտը պաշտպանում էին Է. Աղայեանը և Ն. Պառնասեանը, որոնք պնդում էին, որ հայցականը պատմականօրէն դուրս է մնացել, իսկ սեռականը պահպանուել է։ Մեր համոզմամբ եւս, սեռական հոլովի բացառումը դժուարութիւնների է յանգեցնում հոլովների սահմանման և ուսուցման համար, ուստի նպատակահարմար և անհրաժեշտ է վեց հոլովի կիրառումը։ Ըստ այդմ՝ արդի գրական հայերէնում կան հետեւեալ 6 հոլովները՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական։

V. BERBERYAN

LINGUISTIC JUSTIFICATION FOR UNDERSTANDING SIX CASES

Summary

The case is one of the most important realities of the morphological structure of the modern Armenian language. Each case has its own form and it reflects some kind of grammatical (relational) meaning.

The purpose of this article is to present the theory of six cases, which exists in Armenian linguistics. This point of view was defended by E. Aghayan and N. Parnasyan, who claimed that the accusative had historically disappeared and the genitive has survived. We are also convinced that the exception of the genitive case leads to additional difficulties for the determination and study of cases, hence it is expedient and necessary to use six cases. At that, in modern literary Armenian there are the following 6 cases: nominative, genitive, dative, ablative, instrumental, prepositional.